

կու պատերազմներէն ետքն ալ: Խօսքի ուժ, մտածումը զգեստաւորելու մէջ փայլ, ինչպէս ճաշակ, ընկեր Մաթիկը կ'ընէին ո՛չ միայն ուշագրաւ, այլեւ տարօրէն տպաւորիչ: Հիմա կը խորհիմ, թէ գրեթէ վարակիչ սա տաքութեան մէջ քաղցրութիւնը, ու կիրքին հետ գեղեցկութիւնը փաստեր էին անոր տպաւորութեանց խորքէն եւ ուժէն: Յետոյ, խանդավառութիւնը ձրի տարագ մը չէ: Չայն ուրիշներու վրայով փնտռելը՝ բան մը կ'ապացուցանէ: Ու նոյն ճամբով զայն անվրէպ գտնելը դարձեալ խառնուածքի մը վկայութիւնն է: Ու թէեւ ինծի չտրուեցաւ այն ատեն զանազանութիւնը գործօն ու կրաւոր խառնուածքներու, հիմա կրնամ ճշդել, որ Մաթիկը առաջին մարդն էր ինծի ներշնչող խուլ գիտակցութիւնը միտն օրէնքի մը, որուն համեմատ, ուրիշներուն գեղեցկութիւնը քնարական սա հեշտանքով փառաբանող մը դիւրաւ կը պահանջէ նուազ իմաստուն, նուազ խանդավառ, բայց աւելի կորովի միտքերու հետ շփման միջոցին: Մոսկուայէն մինչեւ իմ գեղը անիկա որսորդ մըն էր տպաւորութիւններու: Տպաւորութեանց ետեւէն սա արշաւը թերեւս խուլ, թաքուն ազդա՛կը՝ զայն մեր կողմերը ուղղող: Տպաւորութեանց սա անյագ ծարաւը, որ քայքայեր էր անոր ուսանողի ասպարէզը, որուն համար իր մայրը զարկեր էր հազար դուռ, սանկ քառորդ ռոճիկի մը պէս բան մը ապահովելու իր «մինուճար»ին: Մռայլ, սարսափով տրոփուն համախմբումներու մէջ անիկա ականջ ու սիրտ էր տուած կրակոտ խօսքերու: Անոնցմէ ազդուած էր, որ լքեց բժշկական ֆաբուլտետի ատամնաբուժական սեկցիայում իր ուսանողի տեղը, գրուելու համար զինուոր Նոր-Տաճարականներուն: Մեծ քնարականութեամբ ու «հոգեյոյզ» պատրաստակամութեամբ լեցուն նամակով մը անիկա անարգեց իր մեկենասի կտրուկ հրահանգը, իր ուսումը շարունակելու, ազգը փրկելու դերը թողլով ուրիշներու, որոնք առնուազն ատոր համար օժտուած էին... բազուկներով, քանի որ նմաններուն խելքը անբա-